




ԵՐԲ ԵՒ ԻՆՉՊԷՍ ԱՌԱՋԱՑԱՄԱՐԻ ԱՐԱՐԱԾԸ

Այս հարցումներուն պատասխանները ոչ ոք կրնայ յստակ տալ: Այնուամենայնիւ, գիտնականները կ'ենթադրեն, որ առաջին մարդը յայտնուած է մօտաւորապէս 200 հազար տարի առաջ: Ան նման էր մարդանման կապիկի: Մարմինը ծածկուած էր խիտ մազերով, իսկ ծնոտը առաջ ցցուած էր: Նախադարեան մարդուն արտաքին տեսքը աստիճանաբար սկսաւ փոխուիլ, զարգացաւ մարմինը, ձեռքերը, ոտքերը եւ ուղեղը, որպէսզի կարենայ սնունդ պատրաստել իրեն համար: Ան կըրցաւ պատրաստել աշխատանքի եւ որսի պարզ գործիքներ:

Հաւանաբար լսած էք «Աշխատանքը կապիկին մարդ դարձուց» արտայայտութիւնը: Իսկապէս ճիշդ է: Չէ՞ որ կապկանման արարածները մարդ դարձան, երբ սրկսան գործիքներ գործածել իրենց կեանքը բարելաւելու համար, սակայն այս հարցը շատ երկար տեւեց, հաւանաբար հազարաւոր տարիներ: Այս երկարատեւ ժամանակաշրջանին նախադարեան մարդիկ ամբողջութեամբ կորսնցուցած են կապիկին բնորոշ գիծերը եւ ունեցած են ներկայի տեսքը:



ԹԻՒՆ ՊԱՏՐԱՍՏԵՑ՝ ՌԻԹԱ ԿԱՌԵԱՆ-ՏԻՔՄԻՔԵԱՆ
ՆԿԱՐԱԶԱՐՈՒՅՑ՝ ՌԱՅՅԻ ՔԵՇԻՇԵԱՆ



ԱՂՈՒԷՄՆ ՈՒ ԿԱՏՈՒՆ

Աղուեսն ու կատուն բարեկամներ էին, Օր մը, դաշտի մը մէջ կը պտտէին.
-Բարեկա՛մ,- ըսաւ աղուեսը կատուին,-
Ես քեզմէ շատ աւելի խելացի եմ
եւ նրբամիտ: Արդարեւ ես կը տեսնեմ
Որ դուն սոսկ մուկ որսալու մէջ քաջ ես,
Ինծի չափ հեռատես եւ խորամանկ չես:
-Կը հաւատամ,- ըսաւ կատուն,- բայց տեսնենք
Թէ մենք մեզ ինչպէ՞ս փորձանքեն կ'ազատենք:
Կը տեսնե՞ս որսորդին շուները երկու,
Ուղղակի հոս կու գան եւ ահարկու են:
Տեսնեմ խորամանկութեամբդ ի՞նչ կ'ընես,
Թէ ո՛վ է խելացին հիմա կը տեսնես:
Կատուն ցատկեց ծառին վրայ մօտակայ,
Իսկ աղուեսը սատկեցաւ արիւնլուայ:



Չանացէ՛ք միշտ ուղիղ ճամբէն չէղիլ.
Խորամանկ ալ ըլլաք, կրնան գտնուիլ
Ձեզմէ շատ աւելի խորամանկ մարդիկ,
Ուստի մի՛ ըլլաք դուք պոռոտախօս,
Համեստ համարում ունեցէ՛ք ձեր անձին,
Որպէսզի ձեր սրտերը չխռովին
Երբ ձեզմէ իմաստուն մարդիկ յայտնուին:
Ուստի ջանացէ՛ք չափ դնել ձեր լեզուին:



ԵԳԻՊՏՈՍԻ ԹՈՒԹՎՆԵԱՄՈՆ ԹՎԳՎՈՐԻՆ ԱՌԱՄՊԵԼԸ

ԽԱՂՆԵՐ

Թութանխամոն փարաւոնին գերեզմանին եւ անոր պարունակած բոլոր հարստութիւններուն յայտնաբերումը իսկական առասպել մը հիւսեց Յին Եգիպտոսի այս թագաւորին շուրջ:

Երբ Յաուրտ Զարթըրին ղեկավարած հնագետներու արշաւախումբ մը Թութանխամոնին գերեզմանը աւագներուն տակէն յայտնաբերեց 1920-ական թուականներուն, անոնք մեծ անակնկալի մը առջեւ գտնուեցան Թութանխամոնին մոմիան պահող սքանչելի դագաղին կողքին, գերեզմանին մէջ կը գտնուէին հազարաւոր առարկաներ, ինչպէս՝ ջայլամի փետուրներէ շինուած հովա հարներ, պրոնզէ փող մը, ոսկիէ դաշոյն մը, գինիի 30 կարասներ եւ վեց հատ իսկական չափի կառքեր:

Թութանխամոն թողուած էր նաեւ 32 զոյգ հողաթափերով եւ 139 ձեռնափայտերով: Ընդամենը աւելի քան 300 առարկաներ դրուած էին անոր գերեզմանին մէջ յետմահու գործածութեան համար:

ԻՆՉՊԷՍ ԷԻՆ ԹՈՒԹՎՆԵԱՄՈՆԻՆ ԴԵՍԵԻ ԳԻԾԵՐԸ

Անոր դագաղին վրայի փառաւոր ոսկիէ դիմակը մեզի այն տպաւորութիւնը կու տար, թէ երիտասարդ թագաւորը, որ 9-ը տարեկանին փարաւոն դարձած էր, շատ գեղեցիկ դէմք մը ուներ:


Սակայն իրականութիւնը շատ աւելի տարբեր է:

Գիտնականները ուսումնասիրած են անոր մոմիային մնացորդները՝ թագաւորին իսկական դիմանկարը յայտնաբերելու համար: Անոնք նոյնիսկ քննութիւններ կատարած են հաստատելու համար, թէ անոր ծնողները իսկապէս քոյր եւ եղբայր էին:


Այս շատ մօտիկ ազգականական կապն է, որ վստահաբար կը բացատրէ այն բազմաթիւ ֆիզիքական թերութիւնները, որոնցմէ կը տառապէր Թութանխամոն: Անոր ակռաները ծուռ էին, կոնքերը կնոջ մը կոնքերուն նման լայն, եւ մէկ ոտքը ծռած:

Թագաւորը շատ երիտասարդ տարիքին մահացած է, սակայն՝ ոչ կառքի մը արկածի պատճառով, ինչպէս կ'ենթադրուէր: Որովհետեւ այդ յիշուած թերութիւններով ան կառք չէր կրնար քշել:

Անոր գերեզմանին մէջ գտնուած 130 ձեռնափայտերն ալ կու գան փաստելու այս հաւանականութիւնը:




Կրնա՞ս գտնել իրար նմանող երկու կերպարները:



Կրնա՞ս գտնել մարդամեքենային գլխուն հասցնող ճամբան:

Կրնա՞ս ամբողջացնել թիւերու բուրգը գիտնալով, թէ իւրաքանչիւր շրջանակի մէջի թիւը հաւասար է անոր տակը գտնուող երկու թիւերուն գումարումին:





ԱՆՄՈՒՄՆԱԿԻ ՍԱԼՄԱ Լէյլա Սալեմ



Սալմա փափաքեցաւ անուանի անձ մը դառնալ, որպէսզի ամէն մարդ յիշէր զինք: Զօղուն մը առաւ ու առուակի մակերեսին վրայ գրեց՝ «Սալմա»: Սակայն ջուրը անմիջապէս սրբեց գայն ու անյայտացուց:

Սալմա սաստիկ յուզուեցաւ ու խոժոռ դէմքով կանգնեցաւ: Կրկին վերցուց ձօղունը եւ փխրուն հողին վրայ գրեց. «Սալմա»: Անունը գեղեցիկ գծագրութեան մը նման պսպղաց արեւուն ճառագայթներուն տակ: Սալմա ուրախացաւ, որովհետեւ հովը, թռչունները, ամպերն ու աստղերը անպայման հոնկէ պիտի անցնէին ու կարդային «Սալմա» ն. այդպիսով իր անունը պիտի փոխադրուէր աշխարհի չորս ծագերը, ու պիտի դառնար հանրածանօթ դէմք մը:

- Երբ իրիկուն եղաւ, Սալմա հարցուց աստղերէն մէկուն.
- Ա՛ստղ, ա՛ստղ, դուն կը ճանչնա՞ս զիս:
- Ես քեզ չեմ ճանչնար, - պատասխանեց աստղը:
- Ինչպէ՞ս թէ զիս չես ճանչնար, առուակին մօտ, հողին վրայ գրուած անունը չկարդացի՞ր:
- Ես կարդալ չեմ գիտեր, - պատասխանեց աստղը:
- Երբ առտու եղաւ, Սալմա հարցուց պատուհանին վրայ կանգնող թռչունին:
- Թռչնա՛կ, գիտե՞ս թէ ո՞վ եմ ես:
- Դուն գեղեցիկ աղջիկ մըն ես, - պատասխանեց թռչնակը:
- Ի՞նչ է անունս: Առուակին մօտ անունս չկարդացի՞ր:
- Ես անուններ կարդալ չեմ գիտեր, - պատասխանեց թռչնակը: Ես պատմութիւններ կը սորվիմ զորս կը պատմեն ինծի ծառերը ու կը պատմեմ զանոնք բոլորին:
- Յանկարծ Սալմա գաղափար մը յղացաւ, որուն համար շատ խանդավառուեցաւ:
- Փոքրիկ ոստ մը բերաւ, փխրուն հողը փորեց, մանրիկ ու նուրբ արմատներով մէջը մխրճեց ու ջրեց:
- Առաւօտուն, Սալմա տեսաւ որ ցանած ոստը կը կքեր իր վրայ կանգնող թռչնակին ծանրութեան տակ: Սալմա հարցուց թռչնակին.
- Թռչնա՛կ, ո՞վ եմ ես:
- Թռչնակը պատասխանեց.
- Դուն սիրունիկ աղջիկ մըն ես, որուն անունը Սալմա է:
- Սալմա է...: Ինչպէ՞ս գիտցար անունս, -հարցուց Սալմա ժպտալով:
- Ոստը ինծի սիրունիկ հեքիաթ մը պատմեց, - պատասխանեց թռչնակը: Այսպէս. -
- «Գեղեցիկ աղջնակ մը կար, որուն անունը Սալմա էր. Սալմա զինք հողի մէջ տնկած էր, ջրած էր, որպէսզի օր մը գայն մեծցած տեսներ»:
- Թռչնակը պատմեց ոստին հեքիաթը ու թռաւ:
- Սալմա կանչեց ետեւէն.
- Թռչնա՛կ, եկո՛ւր, ո՞ւր կ'երթաս:
- Կ'երթամ, որ աշխարհի, փոքրիկներուն պատմեմ հեքիաթ մը, որուն մէջ Սալմա անունով անուշիկ աղջիկ մը կատարած էր հրաշալի ու անմոռանալի գործ մը:

ՀԵՏԱՔՐՔՐԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ



-Լուսինը արողջովին կլորակ չէ, այլ՝ հակաթաճել:

-Հիւսիսային բեւեռին մէջ, ուր հետախոյզները կրցած են հասնիլ 1909-ին, արեւը կը ծագի Մարտ ամսուն եւ մայր կը մտնէ Սեպտեմբեր ամսուն:

-Ձիւնի յատուկ առաջին կօշիկները գործածուած էին աւելի քան 6000 տարիներ առաջ:

-Տաք կլիմաներու տակ ապրող արջերը ձմրան քունի մէջ չեն մտներ, որովհետեւ անոնց համար դիրին է ամբողջ ձմրան ընթացքին ուտելիք գտնել:

-Ձմեռնային Ողիմպիական առաջին խաղերը տեղի ունեցած են 1924 թուականին, այդ Ողիմպիականը կ'ընդգրկէր միայն վեց մարզաձեւ:



-Հայքու ճափոնական բանաստեղծութեան տեսակ մըն է, որ բաղկացած է միայն 17 վանկերէ: Ըստ աւանդութեան վանկերու այս թիւը ամենէն յարմարն է մէկ շունչով արտասանելու այդ բանաստեղծութիւնը:


-Ներկայիս Էյֆել աշտարակը սրճագոյն է: Սակայն դարերու ընթացքին անիկա ներկուած է կարմիր, նարնջագոյն եւ դեղին



ԻՆՉՈՐԻ ՎՏԱՆԳԱԽՈՐ Է ԾԱՌ ՄԱԳԼՅՈՂ ԳՈՐՏԸ

Հարաւային Ամերիկեան ցամաքամասին վրայ կ'ապրին վառ գոյներով գորտեր՝ ծառ մագլցողներ: Սակայն պետք չէ դակալ անոնց, քանի որ այս երկկենցաղները շատ վտանգաւոր են: Անոնց մարմինը կ'արտադրէ նիւթ մը, որ կրնայ թունաւորել ոչ միայն կենդանիները, այլ մարդ արարածը: Այդ ձեւով ան ինքզինքը կը պաշտպանէ գիշատիչներէն:

Գիտնականները կը կարծեն, որ այս տեսակի գորտերուն մարմինին թոյնը կը կուտակուի երբ անոնք մրջիկ կամ մծեղ կ'ուտեն:



ԻՆՉ ԳԻՏԵՆՔ ՄԻՋԱՏՆԵՐՈՒ ՄԱՄԻՆ

Միջատները մեր մոլորակի վրայ գոյութիւն ունեցող կենդանի էակներու ամենաբազմատեսակ եւ ամենաբազմաքանակ դասն են: Երկրագունդի վրայ յայտնուելով աւելի քան 100 միլիոն տարի առաջ՝ անոնք կրցած են համարուիլ տարբեր կենսապայմաններու՝ չոր անապատներէն մինչեւ Անթարքթիքայի սառոյցները: Բոլոր միջատներուն կը միաւորեն քանի մը ընդհանրութիւններ՝ անոնց մարմինը բաղկացած է 3 մասէ կամ բաժինէ՝ գլուխէ, կուրծքէ եւ որովայնէ: Միջատներու դասի բոլոր ներկայացուցիչները անողնաշար են, այսինքն՝ ողնաշար չունին: Եւ վերջապէս՝ բոլոր միջատներն ալ ունին 6 ոտք եւ մեծամասնութիւնը՝ 2 զոյգ թել:

Շատ միջատներ բնութեան մէջ կարելոր ու օգտակար դեր կը կատարեն: Այսպէս՝ սննդարար նիւթերը, որոնք կը ձեւաւորուին միջատներու կողմէ կենդանիներու եւ բոյսերու մնացորդներու վերամշակման արդիւնքով, կը պարարտացնեն հողը եւ կ'օժանդակեն բոյսերու աճման ու զարգացման:

